



ՊՍԸԿՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

(Զաւեշտ)



Ա

Սրբազանը դեռ նոր էր զարթել քնից, երբ առաջնորդարանի ծառան ներս գալով՝ լայտնեց սենեկապան սպասաւորին թէ՛ Մայր եկեղեցու լուստրարը վաղուց սպասում է դրանը՝ սրբազանին տեսնելու համար։

— Ի՞նչ ունի լուսարարը սրբազանի հետ, հարցրեց սենեկապետը մի առանձին արհամարհանքով։

— Զրգիտեմ, ասում է թէ՛ գաղտնիք ունի սրբազանին հաղորդելու։

— Գաղտնիք։

— Այո՛։

— Այդ հետաքրքրական է, կանչիր նրան այստեղ, հրամայեց սենեկապանը, ընդունելով որ քահանաներից մինը անպատճառ դաւադրութիւն է սարքել սրբազանի դէմ։

Մի քանի րոպէից ներս մտաւ լուսարարը։

Սա մի նիհար, միջին հասակով, համակրելի դէմքով և քաղցր նայուածքով երիտասարդ էր: Տարիքը կը լինէր մօտ երեսուն: Եւ որովհետեւ սարկաւազի աստիճան ունէր, ուստի հագած էր երկար պարեգօտ, որ նրա դալկահար ու մօրուսով ծածկուած դէմքին տալիս էր բարեպաշտ հաւատաւորի կերպարանք:

— Ի՞նչ ունիս սրբազանի հետ որ այսպէս վաղ կոմենում ես անհանգստացնել նրան, հարցրեց սենեկապանը՝ դիտելով լուսարարին մի բարձրայօն նայուածքով:

— Շատ կարեւոր հաղորդելիք, պատասխանեց վերջինս:

— Այսինքն:

— Այսինքն այնպիսի մի բան, որ միայն սրբազան հօրը կարող եմ յայտնել:

— Այդ միևնոյն է. առաջ կարող ես ինչ յայտնել, նկատեց սենեկապանը այնպիսի մի եղանակով, որից կարելի էր ենթադրել թէ՛ որքան իրաւունքներ է վայելում նա առաջնորդարանում:

— Չեմ կարող:

— Ի՞նչպէս թէ չես կարող, հարցրեց սենեկապանը՝ զարմանալով լուսարարի լանդգնութեան վրայ:

— Ասում եմ որ չեմ կարող, մէթէ հասկանալի լեզուով չեմ խօսում, նկատեց լուսարարը՝ լայս անգամ արդէն վրդովուելով:

Սենեկապանը առաջին անգամն էր տեսնում մի խնդրարկու, որ համարձակում է սրբազանին յայտնելիք գաղտնիքը իրանից ծածկել: Նա սովոր էր նայել առաջնորդի մօտ եկող ամեն մի խնդրարկուի վրայ ինչպէս իւր հարկատու հպատակի, որը նախ իւր առաջ պիտի խոնարհէր, իւր բարեհաճութիւնը պիտի վաստակէր (քաղցր խօսքերով լինէր այդ, թէ քաղցրագոյն նուէրներով) և ապա թէ սրբազանի մօտ մտնէր:

Եւ արդարեւ, չէ՞ որ սրբազանի սենեկապան լինել նշանակում է՝ առաջնորդարանի տէր լինել, Որին որ կուզէ՝ թող կրտայ ներս մտնել, որին չի ուզել՝ կասէ սրբազանը չէ կամենում ձեզ ընդունել: Շատ յամառողին՝ կառարկէ թէ՝ առաջնորդը հիւանդ է, կամ թէ՝ ներսում պաշտօնական անձանց խորհուրդ կայ, որն ու շ գիշերին կըվերջանայ ևայլն ևայլն:

Այս է ահա պատճառը որ բոլոր խնդրարկուները, նա մանաւանդ, սրբազանից կախում ունեցող հոգևորականները, մեծ ակնածութեամբ են նայում սենեկապան Յակօի վրայ, քաջ գիտենալով որ սրբազանը նրան լսում է սիրով, հետևապէս և յաճախ այդ սպասաւորի կամքից է կախուած թէ ինչ տրամադրութեամբ կընդունէ առաջնորդը այս կամ այն խնդրատուին:

Եւ որովհետեւ Յակօն միշտ պատրաստ ունի ձեռին երկու տեսակ ծանուցումն, որոնցից մէկովը տրամադրում է սրբազանին բարեհաճ աչքով նայել եկողի վրայ, իսկ միւսովն՝ ընդհակառակը, ուստի ամեն ոք աշխատում է չբերգօել Յակօի զայրոյթը, որպէս զի արժանանայ առաջին տեսակի ծանուցման:

Լուսարարը, սակայն անզգոյշ գտնուեցաւ:

Թողնելով նրան դահլիճում, սենեկապանը մտաւ սրբազանի մօտ, որն այդ ըոպէին լուացւում էր, և իւր երկրորդ տեսակի ծանուցումն արաւ:

— Մայր եկեղեցու լուսարարը, սրբազան, առաւօտուանից եկել դուռը կտրել է, ասում է սրբազանին պիտի տեսնեմ: Ասում եմ դեռ նոր է վերկենում, գնա՛ մի ժամից արի, ասում է՝ չէ, ես հէնց հմի պիտի տեսնեմ. ասա՛ թող ընդունի, չեմ կարող սպասել:

— Ե՛՛՛, բացագանչեց սրբազանը էջմիածնական տունով:

— Հապա՛. չեմ իմանում խմած է, թէ՛ դժուած:

— Ա՛յ տղայ, զգուշ կաց, այդպիսի մարդկանց մի՛ ընդունիր:

— Ի՞նչ անեմ, սրբազան, ասում է առաջնորդի մօտ եմ եկել, դու թի՛նջ իրաւունք ունես որ չ'ընդունես:

— Ե՛օ:

— Հապա՛:

— Ուրեմն հարբած է:

— Կարծեմ:

— Այդպէս վա՛ղ:

— Շատ փչացածն է երևում:

Սրբազանը իր լուացումը վերջացրեց և սպասաւորի օգնութեամբ հագնուելով՝ հրամայեց թէ՛յ տանել ընդու- նարանը: Ապա ինքն ևս ուղղուելով այդտեղ՝ կարգա- դրեց կանչել լուսարարին:

Երբ վերջինս ներս մտաւ, սրբազանն արդէն նըս- տած էր բազմոցի վրայ:

— Հա՛, թի՛նջ ունիս, հարցրեց նա լուսարարին, երբ սա խորը գլուխ տալով կանգնեց դրան առաջ:

— Սրբազան հայր, եկալ ձեզ խնդրելու որ իրա-ւունք տաք ինձ՝ հանել մեր եկեղեցու վերնատանը գլու- նուող մետաղեայ պսակները՝ և փշրել այնոնք:

— Ի՞նչ, աչքերը մեծ բանալով հարցրեց առաջ- նորդը:

— Պսակներն եմ ասում, սրբազան, այն որ ննջե- ցեալների տէրերը տալիս են մեզ՝ եկեղեցու վերնատանը կախելու համար:

— Իրաւունք տամ որ հանես ու փշրես:

— Այո՛, սրբազան հայր:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ նրանք պղծում են եկեղեցին:

— Ինչե՛ր ես խօսում, ալ տղայ:

— Այդպէս է, սրբազան Հայր. այդ իրենք պսակներն են ասում:

— Պսակները.

— Այո՛, պսակները, որոնք ամեն օր կրկնում են այդ խնդիրը բողոքելով:

Սրբազանը ոչինչ չպատասխանեց, այլ աչքերը մեծ բանալով նայեց աջ ու ձախ և ապա ուժգին հնչակը քաշեց:

Ներս մտաւ սենեկապանը:

— Թուղթ ու գրիչ բեր, հրամայեց նա կամացուկ: Յակօ՛ն հեռացաւ:

— Ծրար էլ, կանչեց ետեւից սրբազանը:

Մի քանի րոպէից սպասաւորը վերադարձաւ գրութեան վերաբերեալ նիւթերը ձեռին, զորս և դրեց սրբազանի առաջ:

Վերջինս շտապով ու երկիւղագին գրեց մի համառօտ նամակ, դրեց ծրարի մէջ և հասցէն գրելով՝ դարձաւ լուսարարին:

— Լաւ ես ասում, որդի, պէտք է այդ պսակները հանել եկեղեցուց և փշրտել: Բայց ամեն իր այդտեղ ցուցակագրուած է երէցփոխանական մատեանում, իսկ այդ մատեանները քննում են ժողովրդից ընտրուած հաշուատեսները: Դրանցից մինը, ինչպէս գիտես, բժիշկ Մալուխեանն է: Տար նրան այս նամակը, որով ես արդէն տուել եմ իմ համաձայնութիւնը, եթէ նա ևս կը համաձայնուի, այն ժամանակ հանիր պսակները և փշրտիր:

— Իսկ դուք չէ՞ք կամենում հարցնել թէ՛ ինչո՞ւ համար եմ ես այդ հրամանը խնդրում ձեզանից, հարցրեց լուսարարը վերաւորուած ձայնով:

— Ինչ հարկաւոր է, որդի, ես արդէն գիտեմ պատճառը. դու գնա՛ Մալուխեանի մօտ և հարկ եղածը

նրան բացատրիր։ Այս ասելով՝ սրբազանը շտապով վերկացաւ տեղից և, կարծես, այցելուի երեսից փախչելով՝ ուղղուեցաւ դէպի առանձնարանը, հրամայելով Յակոբին հետևել իրեն։

Երբ վերջինս մօտեցաւ, նա շշջալով ասաց.

—Ա՛յ տղայ. դճւրս տար դրան այստեղից շուտով։

—Ի՞նչ կայ, սրբազան, թէ՛ իմացար, հետաքրքրուեց Յակոբն.

—Դճւրս տար, ասում եմ, ասոււշ, ինչ մասլահաթի ժամանակ է, բարկացաւ սրբազանը և ներս մտնելով առանձնարանը՝ դուռը ետևից փակեց։

Յակոբն վերադարձաւ, վերցրեց սեղանի վրայ դրուած ծրարը, լանձնեց լուսարարին և դահլճի դուռը բանալով՝ հրաւիրեց վերջինիս ելնել ընդունարանից։

Լուսարարը շուռ եկաւ մեքենայաբար և մտամուռ դուրս գնաց առաջնորդարանից։

—Տօ, լիմար, ճւր ես այն խելագարին ներս բերել այստեղ, հարցրեց սրբազանը սենեկապանին, երբ վերջինս ներս եկաւ սարկաւազի գալստեան պատճառն իմանալու։

—Խելագարե՛ն. մթթէ նա խելագար է, սրբազան...

—Ի հարկէ, թնչպէս է որ չես իմացել։

—Ի՞նչպէս իմանայի, սրբազան։

—Ի՞նչպէս պիտի իմանայիր, ասոււշ, չէիր տեսնում որ աչքերը խառնուած, մազերը գգգգուած, պինչերը լայնացած...

—Այդպէս բաներ ես չեմ նկատել։

—Ի հարկէ, չէիր նկատիլ, քանի որ դու եկողի դէմքին չես նայում, այլ գրպանին։

—Սրբազան...

—Դէ, լաւ, մի՛ երկարացնիլ։ Ասա՛ տեսնեմ, դուրս անել տուիր գժին թէ՛ ոչ։

— Բոլորովին:

— Պատուիրէր որ բաւի դուռը փակեն, նա կարող է վերագառնալ: Դռնապանին զգուշացրու որ ներս չը թողնէ այդպիսիներին, հրամայեց սրբազանը և Յակօն գուրս գնաց այդ պատուէրը ևս կատարելու:

Բ

Լուսարարը, սակայն, իր քայլերն ուղղեց դէպի Մալուխեանի տունը, և, չնայելով որ գուշակում էր թէ սրբազանի նամակը իւր պատիւը շօշափող հաղորդագրութիւն է պարունակում, այնու ամենայնիւ, նա հանգիստ սրտով քաշեց բժշկի տան հնչակը, երբ հասաւ նրա մուտքին:

Դուռը բացող ծառան յայտնեց որ բժիշկը տանն է, ուստի լուսարարը գոհութեամբ բարձրանալով սանդուղքներից, մտաւ ծառայի ցոյց տուած ընդունարանը ու նստեց մետաքսապատ աթոռներից մինի վրայ:

Տասը ըոպէից լետ՝ ներս մտաւ բժիշկը:

Լուսարարը տեղից բարձրանալով ողջունեց բժշկին խոնարհութեամբ և ծոցից հանելով սրբազանի նամակը, տուաւ նորան:

— Այս ումքն է, հարցրեց բժիշկը:

— Առաջնորդից, եղաւ պատասխանը:

Բժիշկը բացաւ ծրարը, կարդաց, ապա նամակը դրնելով սեղանի վրայ, մօտեցաւ լուսարարին:

— Դուք հիւանդ էք, հարցրեց նա մի առանձին հոգածութեամբ:

— Ոչ, պատասխանեց լուսարարը:

— Բարի, բայց և այնպէս, մի որևէ թուլութիւն չէք զգում:

— Ոչ մի թուլութիւն:

— Եւ ոչ էլ ջղալին անհանգստութիւն ունիք:

— Ես բոլորովին առողջ եմ, պարոն բժիշկ:

— Հմ... հասկանում եմ. իսկ գիշերները հանգիստ էք քնում:

— Բոլորովին հանգիստ:

— Բարի. բարի... Այս ասելով բժիշկը աւելի մօտեցաւ լուսարարին և նրա երեսը դէպի լոյսը դարձնելով սկսեց ուշադրութեամբ աչքերը քննել, տեսնելու համար թէ՛ խառնուած չե՞ն նրանք, կամ բիբերից մինը մեծ և միւսը փոքր չե՞:

Սակայն լուսարարի աչքերը, ինչպէս միշտ, պարզ էին ու փայլուն, իսկ բիբերի մեծութիւնը իրար հաւասար:

— Հանեցէք ձեր լեզուն և ուղիղ կախեցէք դէպի վայր, հրամայեց բժիշկը:

Լուսարարը, որ մինչև այդ խոնարհութեամբ տեղի էր տալիս բժշկի քննութեան, այս անգամ արդէն կանգ առաւ:

— Ի՛նչու համար է այդ քննութիւնը, պարոն, բժիշկ, հարցրեց նա:

— Իսկոյն կասեմ, սիրելիս, իսկոյն, հանեցէք ձեր լեզուն:

Լուսարարը հանեց լեզուն և ուղիղ ձևով կախեց դէպի վայր:

Բժիշկը տեսաւ որ, հակառակ իւր սպասածին, լուսարարը չէ ծռում լեզուն ոչ աջ և ոչ ձախ կողմը, այլ պահում է ուղիղ գիրքում:

— «Այստեղ մի թիւրիմացութիւն կայ... մտածեց ինքն իրան բժիշկը և որոշեց մի ուրիշ փորձ անել. — Հապա, սիրելիս, փակեցէք ձեր աչքերը և սենեակի այս կողմից անցէք միւսը՝ ուղիղ գծով:

— Բայց, պ. բժիշկ, բացատրեցէք խնդրում եմ,

ինչո՞ւ համար են այս բաները:

—Ասացի որ կըբացատրեմ, դուք դեռ արեք ինչ որ ասում եմ:

Լուսարարը ժպտաց և առանց հասկանալու թէ ինչո՞ւ համար է ինքը այս տարօրինակ քննութիւններին ենթարկւում, փակեց աչքերը և ուղիղ ու հաստատ քայլերով դնաց բժշկի ցոյց տուած տեղից մինչև միւսը:

Բժիշկը տեսաւ որ նա չըշեղեց ճանապարհը, կամ, ինչպէս սպասում էր, չըդողաց, և ոչ էլ ջղաձգական ոստիւն արաւ:

—«Ձեմ հասկանում, այս մարդը առողջ է, քնչո՞ւ համար են ինձ մօտ ուղարկել», հարցրեց բժիշկը ինքն իրան և որոշեց մի վերջին փորձ ևս անել. — հապա, հանեցէք ձեր պարեգօտը, դարձաւ նա լուսարարին: Վերջինս այս անգամ չընդդիմացաւ:

—Այս ներքնազգեստն ևս:

Լուսարարը այն էլ հանեց:

Ապա բժիշկը մօտենալով՝ սկսաւ իր բութ մատով ակոսել հիւանդի ողնաշարը:

—Այստեղ ցաւո՞ւմ է, հարցրեց նա ցոյց տալով ողնաշարի վերին մասը:

—Ոչ, եղաւ սարկաւազի պատասխանը:

—Իսկ այստե՞ղ:

—Ոչ էլ այդտեղ:

—Հագնուեցէք, ասաց բժիշկը և սկսաւ անց ու դարձ անել սենեակում:

Երբ սարկաւազը հագնուեցաւ, բժիշկը լեռ եկաւ և նստեց իւր բազկաթոռի վրայ: Ապա հրաւիրելով լուսարարին իւր մօտ, ասաց.

Նստեցէք և պատմեցէք ինձ ձեր կեանքից մի բան:

—Ի՞մ կեանքից:

—Այո՛:

— Օրինակ, քնչ:

— Օրինակ թէ՛ սրտեղ էք ծնունել, քնչ ծնողներ էք ունեցել. քնչպէս էք ուսում առել...

— Բայց պ. բժիշկ, ասացէք վերջապէս, ինչու համար են այդ քննութիւնները: Ձէ որ ես գործով եմ եկել այստեղ և շուտ էլ պիտի վերադառնամ:

— Բարի, ես դրա դէմ ոչինչ չունիմ: Բայց դուք պատմեցէք մի փոքր:

— Ի՞նչու համար պատմեմ:

— Հէնց այնպէս:

— Տէր Աստուած, ոչինչ չեմ հասկանում:

— Վնաս չունի, պատմեցէք: Բժշկի խնդիրքը չեն մերժիլ:

— Շատ բարի, կը պատմեմ, բայց մի պայմանով:

— Այսինքն:

— Առաջ կարդացէք ինձ սրբազանի նամակը. ես կամենում եմ իմանալ թէ՛ նա քնչ է գրել ձեզ:

— Սրբազանի նամակը... ձեր ինչին է պէտք. մասնաւոր գործի համար է:

— Ոչ, պ. բժիշկ, ես նրան այսօր մի առաջարկութիւն արի, և նա կարծեց թէ՛ խելագարուել եմ: Այդ պատճառով ինձ զրկել է այստեղ որ դուք քննէք ինձ, այնպէս չէ:

Բժիշկը նայեց լուսարարի վրայ և ակամայ ժպտաց.

— Այդ ճշմարիտ է: Եւ եթէ այդքանն արդէն դուք գուշակել էք:

— Կը նշանակէ խելագար չեմ, այնպէս չէ:

— Ոչ, այդ չէի ուզում ասել... Բայց միւսնոյն է: Դուք ինձ ան ասացէք, քնչ առաջարկութիւն էք արել սրբազանին:

Ես նրան առաջարկեցի թոյլ տալ ինձ՝ վերցնել մեր եկեղեցու վերնատանը պահուող բոլոր պսակները

և ջախջախել: Նա ինչ չը մերժեց այդ, բայց ասաց թէ՝ ձեզանից ևս պիտի իրաւունք առնէ: Եւ այժմ ես եկել եմ դրա համար, իսկ դուք ինչ քննում էք իբրեւ խելագարի:

— Բայց դուք ինչո՞ւ համար էք կամենում պսակները փշրել:

— Նրա համար որ նրանք պղծում են եկեղեցին:

— Ի՞նչպէս թէ պղծում են:

— Այնպէս էլի, նրանք իրենք վկայում են, որ իրանց գոյութիւնը այդ եկեղեցում նախատինք է տաճարի սրբութեան համար:

— Այսինքն դուք ինքներդ էք ասում, թէ՛ պսակները:

— Ի հարկէ, պսակները:

— Նրանք ուրեմն խօսում են:

— Փառաւորապէս:

— Եւ դուք լսում էք նրանց:

— Այնպէս պարզ, ինչպէս որ այժմ լսում եմ ձեզ:

— Ի՞նչպէս էք լսում, հապա պատմեցէք, ասաց բժիշկը, ինքն իր մէջ ուրախանալով, որ ահա վերջապէս յաջողուեց իրեն՝ մի բան պատմել տալ հիւանդին, որն եթէ պատմութեան թելը կրկնորցնէ, կամ դէպքերի հետեւութիւնը կըխառնէ իրար, կընշանակէ թէ, արդարեւ մի թերութիւն ունի ուղեղում: Իսկ եթէ ոչ, այն ժամանակ ինքը հարկ եղած ուշադրութիւնը կը դարձնէ նրա յայտնած տարօրինակ նորութեան վրայ:

— Եթէ այդ հարցը սրբազանն արած լինէր, պ. բժիշկ, այն ժամանակ, երևի, ստիպուած էլ չէր լինի ինչ, իբրեւ խելագարի, ուղարկել ձեզ մօտ: Բայց չարաւ: Այդպէս են վերաբերում նրանք, գրեթէ, ամեն բանի, նրանց զբաղեցնում է միայն խնդրի արտաքինը և այդ պատճառով էլ իրանց օրոշումները կապ չեն

ունենում ներքինի հետ: Ինչ որ է, ես յօժարութեամբ կը պատմեմ ձեզ այս դէպքը, յուսալով որ դուք, իբրեւ բժիշկ ու հոգեբան, աւելի լաւ կ'ըմբռնէք ինձ և կը բացատրէք թէ՛ քնչ է նշանակում այս: Միայն թէ նախ իրաւունք տուէք ինձ ծանօթացնել ձեզ մի փոքր իմ անցեալի հետ:

— Խնդրեմ, խնդրեմ, ես սիրով կը լսեմ ձեզ:

— Ես, պարոն բժիշկ, աղքատ ծնողների զաւակ էի ուստի հազիւ կարողացայ թեմական դպրոցի ուսումն աւարտել:

Եւ որովհետեւ դիտաւորութիւն ունէի քահանայանալ, այդ պատճառով պաշտօն ստանձնեցի եկեղեցում և սարկաւագութիւն ստացայ: Բայց քահանայանալս ուշացաւ, որովհետեւ քահանայացնողն ինձ չի սիրում: Բացի այդ, սրբազանի առաջ յարգ վայելող պաշտպան էլ չունեմ, որ բարեխօսէ իմ մասին: Այսուամենայնիւ, ես չեմ վհատում, յուսալով թէ մի օր իմ արժանիքը, գուցէ, միջնորդէ իմ մասին...

«Բայց այդ թողնենք: Այժմ այն ասեմ, պ. բժիշկ, որ ես հաց աշխատելու համար չէ որ քահանայանում եմ, այլ նրա համար որ այդ պաշտօնը գրաւում է ինձ և որ դրանով եկեղեցուն, հետեապէս և ժողովրդին լաւապէս ծառայելու կոչումն եմ զգում իմ մէջ: Որ այդ իմ հոգւոյ բնական հակումն է, ապացոյց՝ որ ես առաջին ու միակ մարդն եմ, որին գրաւում՝ ու զբաղեցնում է եկեղեցին այնպէս ինչպէս ուրիշներին՝ աշխարհային զուարճութիւնները: Մինչդեռ իմ բնկերները հազիւ հասնում են ժամերգութեան և օրհննալ նղնրուքը չլսած՝ թողնում են եկեղեցին, ես, ընդհակառակը, դեռ ժամերգութիւնը չսկսած՝ ժամ առաջ արդէն այդտեղ եմ և զբաղուած գործով, այսինքն նայում եմ տաճարի կարգաւորութեան, մաքրել եմ տալիս փոշիները, ուղղում աշտա-

նակներն ու պատկերները, կարգի բերում եկեղեցական սպասները. պատրաստում մոմերը. դպիրների շապիկները, քահանաների փիլոնները և այլն: Իսկ ժամասացութիւնիցն յետ՝ դարձեալ մի ժամաչափ մնում եմ այդտեղ, նորից ամեն բան իւր տեղը դնում և ապա թէ դուրս գալիս եկեղեցուց: Ինչ տօներին է վերաբերում, այն ժամանակ հօ օրուայ մեծ մասը անցնում եմ տաճարում, որովհետեւ աւելի գործ եմ ունենում կատարելու: Իսկ լուր օրերը, հէնց որ ազատ ժամանակ եմ գտնում, դարձեալ մտնում եմ եկեղեցի և նստելով այդտեղ, կարդում եմ յայսմաւուրք կամ աւետարան: Միով բանիւ ինձ դրսում ոչինչ չէ գրաւում, մինչդեռ եկեղեցում շատ բան եմ գտնում՝ իմ մտքին ու հոգուն կերակուր տալու համար: Ուրիշ բան եմ զգում՝ օրինակ, երբ սուրբ Գիրքը կարդում եմ տանը, և բոլորովին ուրիշ բան երբ այն կարդում եմ եկեղեցում: Այդ ժամանակ ես ինձ չեմ տեսնում երկրի վրայ, այլ մի ինչ որ բարձր ու վեհ աշխարհում, ուր մարդկայինն ու ապականելին անհետանում են իմ աչքերից: Այդ ժամանակ զգում եմ որ եկեղեցու օդն անգամ տոգորուած է սրբութեամբ, ես այն շնչում եմ աւելի լիքը կրծքով, մի ներքին, հոգեկան բերկրութեամբ...

«Ինչն է այս ամենի սլատճառը, չգիտեմ: Մայրս պատմում էր թէ ինձմով լղի եղած ժամանակ, վեց ամիս շարունակ անց է կացրել մեր վանքերից մինում, ուր հայրս, իբրեւ որմնադիր, նորոգում է եղել եկեղեցու փլած տանիքը: Իսկ ինքը բոլոր այդ ժամանակ ծառայել է տաճարին: Գուցէ այս է պատճառը, որ ես այժմ սիրում եմ եկեղեցին...

— Անշուշտ, այդ մի ժառանգական բարեպաշտութիւն է, հաստատեց բժիշկը:

— Եթէ այդպէս է, ուրեմն աւելի լաւ. կընշանակէ

դէպի Աստուծոյ տունն ունեցած իմ սէրը անցողական չէ՝ եւ այդ հէնց երևում է նրանից, որ ես սիրում եմ եկեղեցին թէ ան ժամանակ, երբ նա հոժ ու լի է աղօթողների բազմութեամբ, երբ դպիրները երգում, քահանաները կարգում կամ քարոզում են, երբ պատարագի ժամանակ քնոցները շաչում և բուրուռառ խընկարկում է, երբ մարդկանց բազմութիւնը մի վայրկեան աշխարհը մոռանալով՝ հոգւով սլանում է դէպի վեր... և թէ ան ժամանակ, երբ եկեղեցին դատարկւում է աղօթողներից և մնում ինքն իւր սրբութեան, իւր պատկերների և սպասների հետ:

Այսպիսի վերաբերումն ունենալով դէպի եկեղեցին, ես միշտ, այ. բժիշկ, հանգիստ սրտով եմ ներս ու դուրս արել այդտեղ: Երբէք մի երկիւղ, կամ թագուն զգացմունք չէ խռովել հոգիս, ինչպէս այդ պատահում է շատերի հետ: Իմ ընկերներից մինը, օրինակ, ասում էր թէ՝ եկեղեցին ժողովրդից թափուր եղած ժամանակ, երկիւղ է ազգում իրան. իսկ մի ուրիշը կարծում էր որ եթէ գիշերը պատահմամբ մնայ եկեղեցում, երկիւղից կարող է մեռնել: Այդպիսի բաներ ինձ հետ չեն պատահել: Ես յաճախ սուրբ գիրքը կարդալուց՝ լոգնել ու քնել եմ եկեղեցում, օրը անցել ու գիշերը վրայ է հասել: Եւ երբ զարթնելով տեսել եմ ինձ տաճարում, դուրս եմ եկել այդտեղից հանգիստ սրտով, առանց որ և է երկիւղ զգալու:

«Բայց ահա քանի օր է ինչ մի տարօրինակ դէպք անհանգստացնում է ինձ: Այդ առթիւ էր որ ես սրբազանի մօտ դնացի, բայց նա չըկամեցաւ ինձ լսել և ուղարկեց ձեզ մօտ: Այժմ դուք լսեցէք և ասացէք ճիշդ է այն կարծիքը որ ես կազմել եմ իմ մասին թէ աչ...»

— Ի՞նչ կարծիք:

—Այն թէ եկեղեցու սրբութեան ոգին կամենում է իմ միջոցով խօսել չժողովրդի հետ և յայտնել նրան ճշմարտութիւններ, որոնց անծանօթ է նա մինչև այսօր։

—«Ահա, եղջիւրներն երևում են»... մտածեց ինքըն իրան բժիշկը և ապա լուսարարին դառնալով՝ ասաց.— Խօսեցէք, ես այդ կասեմ, երբ մինչև վերջը կըսեմ ձեզ։

—Բարի, լարեց սարկաւազը և դիրքը աթոռի վրայ ուղղելուց յետ՝ շարունակեց.— Եթէ ես սիրում եմ եկեղեցին, պ. բժիշկ, բնական է որ սիրեմ, նաև, եկեղեցական փառաւոր հանդէսները, շքեղ թափօրները, փայլուն յուղարկաւորութիւնները, անպէս է թէ ոչ։

—Անշուշտ։

—Էհ, պիտի իմանաք որ ես, իսկապէս, ամենից աւելի սիրում եմ վերջինը, այն է՝ յուղարկաւորութիւնը, որովհետև նրա շարժառիթը սովորական լինելով հանդերձ է, միևնոյն ժամանակ, և շատ խորհրդաւոր։ — Յանկարծ մի մարդ, որ երէկ ապրում էր մեզ հետ, որ տեսնում էր Աստուծոյ լոյսը և շնչում երկրի օդն այնպէս, ինչպէս միւս բոլոր մարդիկ, որ ունէր զգացումներ՝ վշտի և ուրախութեան համար և տենչանքներ՝ լաւագունին տիրելու. որ եռանդով մաքառում էր հակառակորդի դէմ, կամ աննահանջ կռւում՝ մի փոքեթին աւելի ստանալու յոսով, այսօր անսպաս թողնում է անխօս ու անտրտունջ. հեռանում է աշխարհից՝ նրա գոյութիւնը բացասելով, հեռանում է մեզանից՝ մեր ձգտումները ծաղրելով...

«Այս կէտը մտածել է տալիս մեզ, այնպէս չէ, և այս առթիւ երկար կարելի էր խօսել. բայց ես չեմ կամենում մտադրեալ նիւթից հեռանալ...»

—Հըմ... Ուրեմն սխալում ենք. մտածեց դարձեալ բժիշկը և ուշադրութիւնը լարեց։

—Այո՛, չեմ կամենում հեռանալ, որովհետև խընդիրը կապ ունի միայն յուղարկաւորութեան հետ, ուստի նրա վերաբերմամբ էլ պիտի խօսեմ:

Մեզ մօտ, հօ գիտէք, ի՞նչպէս փառաւոր են թաղում: Այս բազմամարդ ու բազմացեղ քաղաքում միայն հայոց յուղարկաւորութիւններն են, որոնք գրաւում են առանձին ուշադրութիւն: Ես շատ օտարազգիներից եմ գովեստներից լսել դրանց արտաքին փալլի ու շուքի մասին: Զուարճախօսներից մինը, մինչև անդամ, ասում էր մի օր թէ՛՝ անկարելի է որ հայոց մեռելների յարութիւնը հասարակ ձևով կատարուի. երևի երկնային ոգիները նոյնպիսի հանդէսներով կըյարուցանեն նրանց, որպիսի հանդէսներով որ թաղուած են: Սա, ի հարկէ, կատակ է: Բայց ես, պիտի՛ խոստովանեմ որ չափազանց շատ եմ սիրում այդ հանդէսները: Եւ որքան այնոնք աւելի շքեղ ու փառաւոր են լինում, այնքան աւելի ինձ հիացումն ու յափշտակութիւն են պատճառում: Յուղարկաւորութեան հանգիսի մէջ ամենից աւելի ինձ գրաւում է այն դիակառքը, որ ծածկուած է լինում պսակներով: Օ՛հ, այդ պսակները, հանգուցեալների այդ տխրաշուք արդուզարդերը միակ սիրածս շքեղութիւններն են աշխարհում... Այդ բազմերանգ ծաղկահիւսերը, իրենց մեծագին ժապաւէններով, իրենց ոսկետառ և յաճախ սրտաշարժ մակագրութիւններով՝ ոչ միայն գեղեցկին սիրահար աչքերս են պարարում, այլ սիրտս լցնում են մի թագուն, միայն ինձ հասկանալի երկիւղածութեամբ: Ինձ թւում է թէ՛ դրանք պատկերացնում են ընդհատուած կեանքի օղակները, որոնք իրարից տարաբաժան, անկարող են ալլևս միանալ: Դրանք, միևնոյն ժամանակ, ամփոփում են իրանց մէջ՝ հանգուցեալի կորուստը ողբացող սիրելիների արտասուքը, փոխակերպելով այնոնց վարդի ու

յասմկի, յակնթի կամ շուշան ծաղկի: Եւ իրաւ, եթէ արտասուքները կերպարանափոխուին՝ քնչ կարող են դառնալ, եթէ ոչ ծաղիկներ, ակնապարար գոյներով, անոյշ բուրումներով...

«Եւ ահա այս էր պատճառը որ ես, առհասարակ, մեծ հաճութեամբ էի ընդունում ու եկեղեցում պահում այն գեղարուեստական պսակները, որոնք յայտնի ննջեցեալների վրայ դրած լինելու պատճառով՝ վերջինների տէրերը բերում և յանձնում էին եկեղեցուն, խնդրելով կախել այնոնք վերնատանը, իբրև լիշատակ թանկագին հանգուցեալի:

«Եւ այդ պսակները եկեղեցում գետեղելով՝ ես հոգում էի նրանց մասին մի առանձին քնքշութեամբ, աշխատելով որ դրանք երբէք չըփոշոտին, կամ կոպտութեամբ շոշափուելով՝ ծաղիկներից չըզրկուին:

«Իսկ գուցէ հարցնէք թէ ինչո՞ւ այդ աստիճան հոգածութեամբ էի վերաբերում նրանց.— պատճառն այն էր որ ինձ թւում էր թէ՛ այդ պսակները եթէ շունչ չունին, գէթ, զգացմունք ունին և կարող են վըշտանալ՝ եթէ փոշու շերտերը նրանց փալլուն տեսքը ծածկեն, կամ կոպիտ ձեռքեր իրանց գեղեցկութիւնն աւրեն: Այդ զգացմունքն, ի հարկէ ապրում էր ոչ թէ նրանց՝ այլ իմ մէջ: Որովհետեւ ես ընդունում էի, (և իրօք էլ այդպէս է) թէ այդ պսակների մէջ միաժամանակ մարմնանում ու միաւորում են երկու լարգելի և կարի թանգագին կատարելութիւններ—մինը՝ առաքինութեան կամ հանճարի արժանիքը, միւսն՝ այդ արժանեաց կորստի համար զգացուած վիշտը: Ամենքը գիտեն որ քանի գեռ առաքինին կամ հանճարը շրջում են կենդանիների մէջ, նրանց արժանիքը, մեծ մասամբ, մնում է անյայտ, երբեմն իրանց համեստութեան, իսկ յաճախ՝ նախանձոտների չկամութեան պատճառով: Բայց

նրանց մեռնելուց յետ երբ կրքերը լռում են, (որովհետև հանդիպելի հետ բաժանելու այլ ևս ոչինչ չեն ունենում), այն ժամանակ, ահա, երևան են գալիս մեռնողի, *ալլ-ժանիքը* մեծագրող մարդիկ և արտայայտում են իրանց վիշտը հրապարակով:

«Ահա այդ գնահատուած արժանիքը և նրա կորստեան համար արտայայտուող վշտերն են, որոնք միանալով՝ կազմում են մի մարմին և դառնում *ալլալլ*: Ինչպէս որ դուք չէք կարող առանց խղճահարութեան պատահել կամ ոտնահարել հանճարեղ նկարչի մի գեղեցիկ ստեղծագործութիւնը, որքան էլ նա անշունչ մի առարկայ լինի, և եթէ անէք՝ կըզգաք որ հանճարի արդիւնքը բողբոջում է ձեր բարբարոսութեան դէմ, այնպէս էլ ես, չէի կարող ակնածութեամբ չըվերաբերուել այն ծաղկահիւս պսակներին, որոնք, ինչպէս ասացի, մարմնացնում էին իրանց մէջ մեռնողի արժանիքը և մնացողի վշտերը:

«Յաճախ ես միայնակ այդ պսակների առաջ կանգնած՝ խօսում էի նրանց հետ: Դուք, ի հարկէ, զարմանում էք թէ ի՞նչ կարող էի խօսել անշունչ առարկաների հետ: Իրաւունք ունիք: Բայց, ասացէք խնդրեմ, դուք չէք գտնուել երբէք այնպիսի դրութեան մէջ, որ ցանկանալով ցանկանայիք հասու լինել ձեր հետաքրքրութիւնից խուսափող մի որեւէ ճշմարտութեան, եւ տեսնելով որ այդ նպատակին չէք կարող հասնիլ եթէ դիմէք մարդկանց օգնութեան, (որոնք միայն ստել գիտեն և կեղծել), սրտանց փափագել էք, որ լեզու ստանային այն անշունչ առարկաները, որոնք ինչ-ինչ պատճառով առնչութիւն են ունեցել որոնածդ ճշմարտութեան հետ և այնոնք ցոյց տային ձեզ նրա թագստեան տեղը:

«Օ՛հ, ես շատ անգամ եմ այդպիսի դրութիւնների մէջ գտնուել... Չընայելով տարիքիս, որ մեծ չէ, ալ-

սուամենայնիւ ես աշխարհում տպրել եմ բաւական երկար: Ես մինչև անգամ վշտեր եմ կրել, որոնց պատմութիւնը, ի հարկէ մեր զրոյցին չի վերաբերում: Այսքանը միայն կասեմ որ ինձ համար, առ հասարակ սովորական բան է եղել՝ դիմել անշունչ առարկաներին, երբ ցանկացածս ճշմարտութիւնը իզուր եմ որոնել մարդ արարածի մօտ:

«Այսպէս, ահա, երբ եկեղեցում մի բան կարգաւորելու ժամանակ անցնում էի ես լիշեալ պսակների մօտով և տեսնում նրանց զեղապաճոյճ տեսքն ու հարուստ ժապաւէնների ոսկեգիր մակագրութիւնները, գլխումս յանկարծ ծագում էին հարցեր, որոց լուծումը կամենում էի ստանալ իսկոյն: Ուստի և կանգ առնելով՝ խօսում էի պսակների հետ:

«Բայց քնչ էի խօսում. — ահա, մի սիրուն պսակ, որ շինուած է մրտենու կանաչ ոստերից և զարդարուած յասմիկի ու նարնջածաղկի փնջերով: Նրա լայնադրօշ ժապաւէնի վրայ գրուած է այսպիսի մի մակագրութիւն. *անկեղծ ու ազնիւ քարեկամին՝ վշտահար Ա. Ե. ից:*

«Ես կարդում եմ այդ մակագրութիւնը և ինքս ինձ մտածում. — Այստեղ գրուած են միայն չորս բառեր: Բայց որքան մտքեր, որքան զգացմունքներ են պարունակում նրանք: Եթէ մինը լինէր և մեզ այդ մտքերը բացատրէր, կամ այդ զգացմունքների պատմութիւնը անէր, դրանով նա որքան խրատական, կամ ճիշդի գորովաշարժ պատկերներ կը բանար մեր առաջ... Այսպէս մտածելով՝ ես դառնում էի պսակին:

Ասա, ով անշունչ իր. դու, որ առաջին անգամ գրեկեցիր քո տիրոջ դիակն, արդեօք ճանաչեցիր նրան, իմացար որ աշխարհում նա եղել է մարդկանց *անկեղծ ու ազնիւ քարեկամը*: Արդեօք ոգիները չը պատ-

մեցին քեզ նրա անցեալը, կամ չըշշնջացին ականջիդ թէ՛ քնչ մեծ պատուի արժանացար. որովհետեւ քո ծաղիկները չէին, որոնք զարդարեցին հանգուցեալին, այլ նա ինքն էր, որ շուք տուաւ քո գոյութեանը: Զի դու հիւսած ես այն նիւթերից, որոնց ընութիւնն առատօրէն սփռում է ամեն տեղ և զորս ամեն ձեռք կարող է ժողովել ու փնջել. մինչդեռ անկեղծ ու ազնիւ քարեկամներ, որոնք աշխարհից հեռանալով՝ վշտահար թողնէին սրտերը, չըկան ամեն տեղ նրանք հազուադէպ են խիստ: Եթէ չես իմացել այդ բոլորը, գէթ այժմ գիտցիր այն, որ այդպիսի անձի դադաղը գրկելուդ համար է որ արժանացել ես դու այս սրբարանում կախուելուն:

«Այս եղանակով էլ դառնում էի մի ուրիշին, որ հիւսած էր սպիտակ վարդերից և եզերուած ձիւնափայլ շուշաններով և որ իւր կերպսէ ժապաւէնի վրայ ունէր այսպիսի մակագրութիւն.

«Անկաշառ հրապարակախօսին»,

«Ճշմարտութեան դրօշի տակ,

«Ազնուաբար մարտնչողին»:

«Այսպիսի մակագրութիւնն ինձ արդէն հիացնում էր. ես կարդում էի այն մի քանի անգամ և ոգևորուած բացականչում. — «գեհ, խօսիր, ո՛վ պսակ, պատմիր կեանքըն այն մեծ մարդու, որին չըհրապուրեցին աշխարհի գանձերը, որ ճշմարտութեան դրօշակը ձեռքին կռուեց տկարի իրաւունքի համար, զրկուածին պաշտպանեց... հալածուածին պատսպարեց... Աստ, ճանաչեցիք դու նրան. հպարտացա՛ր արդեօք, երբ հանգչեցրին ճշմարտութեան զինուորի սուրբ նշխարների վրայ. կամ քնչպէս պատահեց որ լեզու չտացար և օրհներգ չերգեցիր նրա հանգստեան համար...»:

«Այսպէս, պարոն բժիշկ, ես խօսում էի մերթ այս և մերթ այն պսակի հետ, նայելով թէ նրանցից ո՛րն

էր աւելի շատ իմ ուշադրութիւնը գրաւում, իւր արտաքին տեսքով, կամ մակագրութեանց խորիմաստութեամբ:

«Բայց ահա թէ այդ առթիւ ինչ պատահեց ինձ մի քանի օր առաջ. Հէնց նոր առաւօտեան ժամերգութիւնը աւարտել և քահանաները դուրս էին գնացել, որ ես մօտեցայ իմ սիրելի պսակներին, որոնց մի շաբաթ էր ինչ չէի նայել և սկսայ փութփութ նրանց փոշին մաքրել. Ապա ժապավէնները մի մի թափ տալով ու կարգաւորելով՝ նորէն մի քանիսի մակագրութիւնները կարդացի, նորէն գլխումս մի քանի հարցեր ծագեցին, մի քանի նոր մտքեր պտտուեցին և ես նրանցից ամեն մինին մի որոշ լուծումն տալով՝ ընդնմին և պսակների հետ խօսակցելով՝ գործս աւարտեցի և եկեղեցու դասը վերադարձայ

«Այստեղ նստելով աւագերեցի աթոռակի վրայ, ցանկացայ մի փոքր հանգստանալ: Շատ ժամանակ անցաւ թէ քիչ, չեմ յիշում. մէկ էլ լանկարծ լսեցի որ մի քանի մարդիկ միաձայն ետեիցս բացականչեցին.

— Խեղճ մարդ, միթէ հաւատում ես:

«Վեր եմ թռչում իսկոյն և յետ նայում իմանալու համար թէ՛ ովքեր են խօսողները: Տեսնում եմ ոչ ոք չլիայ, եկեղեցին դատարկ է այնպէս, ինչպէս որ առաջ. Այսուամենայնիւ, ես չեմ հաւատում աչքերիս և սկսում եմ նայել սիւնների ետեւը, կարծելով թէ այդտեղ մարդիկ են պահուած: Ապա խոնարհելով նայում եմ առաջնորդական բազմոցի տակը:

— Ումն ես որոնում, մենք այստեղ ենք. գոչում են նոյն ձայները:

«Ես նորից վեր եմ թռչում և եկեղեցու մէջ արձանացած նայում այս ու այն կողմը: Նայում եմ երկար. ոչ ոք չէ երևում: — «Այդ մարդիկը երևի խորանումն

են, մտածում եմ ինքս ինձ և երկիւղագին մտնում նախ՝ մէկ և ապա միւս խորանը, և սակայն ոչ մէկի մէջ ոչ ոքի չեմ պատահում:

— «Մենք այստեղ ենք, ո՛վ բարի մարդ. նորէն հըն. չում են ձայները, բայց այս անգամ աւելի տխուր, մե. լամաղձոտ եղանակով:

— Բայց ուլքեր էք դուք վերջապէս, գոչում եմ ես բարձրաձայն և եկեղեցու կամարները արձագանք են տա. լիս իմ հարցին: Այդ արձագանքն արդէն սարսուռ է ագ. դում վրաս: Պատասխան չառնելով՝ ես պատրաստում եմ փախչել: Բայց յանկարծ, ո՛վ հրաշք. տեսնում եմ ա. ռաջիս կանգնած է մի շարժուն ցանկապատ, որ ամբող. ջապէս կազմուած է այն բոլոր պսակներից, որոնք գըտ. նւում էին եկեղեցւոյ վերնատանը և որոց փոշիները սրբել էի ես մի ժամ առաջ:

— Այդ մենք ենք խօսում, բարի լուսարար. մթթէ մեր ձայնը անծանօթ է քեզ. ասում են պսակները միաբերան և ժապաւէնները շարժելով՝ ծածանում օդի մէջ:

«Ես երկիւղից բռնուած՝ նորից յետ եմ փախչում և որոնում մի անկիւն՝ ուր կարողանալի պահուել:

— Պահուելու փոխարէն, բարեկամ, առաջ անցիր դու, բաց արա եկեղեցու դռները և մեզ բոլորիս դուրս շարտիր այստեղից. զի արժանի չենք մենք այս սրբա. ղանում կախուելու, ասում են նրանք այնպիսի մի դա. ռն ու վշտահար ձայնով, որ ես համարձակութիւն եմ առնում նրանց վրայ նայելու:

«Եւ ահա այդ ժամանակ, պսակներից մինը, որ աչքի էր ընկնում իւր փառահեղ մեծութեամբ, ծաղիկ. ների առատութեամբ և հարուստ ժապաւէններով, և որի վրայ, առ հասարակ, ես հիացմունքով էի նայել միշտ, զատուելով միւսներից, մօտեցաւ ինձ և ասաց.

— Էի զուր ես դու այդքան հոգ տանում մեր մասին, բարեկամ, դրանով դու արդէն մեղսակից ես դառնում նրանց, որոնք մեզ գրին ի ցոյց ժողովրդեան՝ կախելով դիակառքերից, կամ աւանդ տալով այս եկեղեցուն: Մենք ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ կնդծիք և ստուծիւն, մեր գոյութիւնը՝ հերքումն է Ճշմարտութեան: Մէթէ այս անյայտ է քեզ:

«Ես լուռ ու զարմանքից սառած՝ յառում եմ աչքերս խօսող պսակին:

— Նայիր դու, ահա, այս մրտենու ճիւղին, շարունակում է նա նոյն եղանակով, — ինչպէս փայլուն, ինչպէս դալար ու ճապուկ է երևում: Անշուշտ քեզ թրւում է թէ՛ նա կեանք ունի իւր մէջ. թէ՛ նրան ոռոգել են առուի ալիքները. թէ՛ նրան օրօրել են դրանան հովերը: Բայց ոչ. նա շինուած է ժանգոտ երկաթից, որից կռում են թէ՛ ստրուկի շղթան թէ՛ դահճի տապարը... Նայիր, հապա, այս վարդերին, այս շուշաններին, որքան են սիրուն, քնքոյշ, կենսալիր... Թւում են թէ հէնց նոր փնջից նրանց պարտիզում մանկամարդ մի կոյս, թէ հէնց նոր ցօղը վերացաւ նրանցից, թէ նրանք բուրում են անուշից բուրումն... Բայց մէկ մօտեցիր ձեռքով շօշափիր: Ո՛հ, ինչ անարգանք... նրանք շինուած են թիթեղի կտորներից, կաւից, ճենապակուց, նոյն այն նիւթերից, որոնցից շինում են և՛ լուացարաններ, և՛ անմաքրութեանց անօթներ... Այսպիսով, ուրեմն, մենք ներկայացնում ենք՝ Աստուծոյ ձեռքով բնութեան մէջ դրած ամենաքնքոյշ ճշմարտութեանց խարդախանքն ու կեղծիքը. վա՛յ մեզ, վա՛յ մեզ...

«Այս բացականչութեան վրայ բոլոր պսակները հառաչեցին, իսկ նրանցից մի քանիսը սկսան գոչել՝ հանձր մեզ այստեղից»:

Էիմ զարմանքն ու ապշութիւնը հետզհետէ աճում

էին: Բայց ես ինձ չէի կորցնում, և երկիւղն իմ մէջ սկսել էր արդէն տեղի տալ հետաքրքրութեան:

«Եւ ահա խօսող պսակն սկսաւ լուշիկ դէպի վեր բարձրանալ և շքեղ ժապաւէնը օդի մէջ ծածանելով շարունակեց.

— Մենք ոչ միայն կեղծիք ենք և ստուծիւն, այլ և պաշտօն ունինք մարդիկ մոլորեցնելու, մտքեր խարդախելու, զգացմունքներ գողանալու: Ապացոյց, ահա, այս մակագրութիւնը, որ ոսկեայտառերով դրոշմուած է իմ մետաքսեայ ժապաւէնի ծալրին: Կարդա՛, եթէ հաճելի է քեզ. «Իւր արժանաւոր որդուն մ'օծազրող ժողովուրդը»: Այսպէս է գրուած այստեղ: Եւ այս հինգ բառերի մէջ՝ կայ հինգ հազար սուտ: Հանգուցեալը, որին ժողովուրդը «իւր արժանաւոր որդի» է անուանում, էր, իսկապէս, նրա անարժան ծնունդը: Տղայութեան ժամանակ, իրաւ է, նա ապրեց այս ժողովրդի մէջ, բայց չըսիրեց նրան, չըխօսեց նրա լեզուն, չըլարեց նրա կրօնը: Երբ ուսումն աւարտեց և աշխարհ մտաւ, նա ամենից առաջ վագեց իւր շահի և փառքի ետեկը: Եւ բաղդը յաջողեց: Նա դարձաւ անուանի. մեծ գործեր կատարեց, մեծ պատիւներ ստացաւ, բայց այդ մեծ գործերը չէին վերաբերում հայրենի երկրին, ստացած պատիւներից մաս չունէր «իւր» ժողովուրդը: Նա ապրեց առանց հայրենիք ճանաչելու, առանց իւր ժողովրդի ցաւերն իմանալու. առանց նրա վշտին գէթ հեռուից կարեկցելու, կամ մատի ծալրով նրա բեռը շարժելու: Բայց, ահա, երբ մեռաւ, լուշարարներն յիշեցրին և ժողովուրդը գոչեց. — «Պա իմ որդին է, ես մեծագրում եմ դրա արժանիքը»: Բայց նա սուտ էր ասում: Ժողովրդի մարդիկը գիտէին որ հանգուցեալն իւր անունով, հռչակով ու փառքով իրանց չէր պատկանում, որովհետեւ նրա սիրտը երբէք չէ-

բաբախել իրանց համար: Սակայն սնոտի փառասիրութիւնը՝ հաւաքական կեղծաւորութեան հետ միանալով՝ հանգուցեալին շինեց իւր արժանաւոր որդի, շքեղ պսակներով նրա դագաղը զարդարեց, և կենդանութեան ժամանակ հոգւով ու սրտով օտարացածին՝ մեռնելուց յետոյ հռչակեց հարազատ, ամփոփեց նրան իւր եկեղեցւոյ բակում, և ինձ, նրա ստախօս պսակին, տեղ յատկացրեց այս սուրբ տաճարում... վայ ինձ, վայ ինձ...

«Աերջին բացագանչութեան՝ դարձեալ միացան բողոքող հառաջանքներ: Ապա խօսող պսակին յաջորդեց մի ուրիշը, որը նոյն կարգով օգի մէջ կախուելով՝ շարժեց մետաքսեայ ժապաւէնը և ասաց.

— Իսկ այստեղ ինձ վրայ տես թէ քնչ են գրել: «Առաքինի ըարկրարին երախտագէտ՝ հասարակութիւնը» — Մ՛հ, եթէ իմանալիք թէ ո՞վ էր այն մարդը, որին տուել են ոչ միայն ըարկրար ալլ և առաքինի անուն: Սա մի թշուառ էակ էր. մարդկային հոգւոյ կատարելութիւններից գուրկ: Աշխարհային յաջողութիւնները բերել էին նրան մեծ հարստութիւն, իսկ դրա փոխարէն՝ զրկել նրան խղճից, ամօթից և կարեկցութեան զգացումից: Աղքատին տեսնելուց՝ նա փակում էր աչքերը, ընկածին պատահելուց՝ կոխում էր ու անցնում: Արհամարհում էր եղբօրը՝ եթէ անկարող էր տեսնում նրան և ատում հարազատին՝ եթէ սա իրանից օգնութիւն էր հայցում: Իւր կենդանութեան ժամանակ նա չը բաղդաւորացրեց ոչ ոքին և ոչ էլ գործեց մի բարիք, որի արդիւնքը տեսնէր իւր աչքով: Դրա փոխարէն նա շատ մարդկանց զրկեց և շատերի աչքից արցունք հոսեցրեց: Այս ամենի հետ միասին նա անբարոյական մարդ էր, շնացող և ազգապիղծ: Եւ այդ ճանապարհէ համար շռայլում էր առատօրէն: Ժողովրդի անէծքը նա լսում էր անտարբերութեամբ և նրա անգորութիւնը

ճաղրում աներկիւղ՝ Բայց երբ մեռաւ այս հրէշը, ժառանգները եկեղեցուն տուին մի թշուառ բաժին և դրանով գնեցին ահա այս քառուկը, որոնք դրոշմուած են իմ ժապաւէնի վրայ: Այս լաւական չէր, նրան թաղել տուին տաճարի բակում. որպէս զի եկող սերունդը խաբեն և նրա բերանով, գոնէ, օրհնել տան անցեալ սերունդից անիծուած մարդուն: Օ՛, ամօթ և նախատի՛նք...

— Ամօթ և նախատի՛նք... կրկնեցին միաբերան միւս պսակները, և ճանապարհ տուին իրենցից մինին, որ շարժուն ցանկապատից ելնելով՝ բարձրանում էր դէպի վեր:

«Բայց, Աստուած իմ, սա այն պսակն էր, որն ես այնքան սիրում էի. և որ պատկանում էր ամենից նշանաւոր մարդուն, միթէ սա էլ պիտի չարախօսէ իւր տիրոջ մասին, մտածեցի ես: Բայց ահա թէ նա ի՛նչ ասաց.

Պու բերան գիտես իմ մակագրութիւնը, ո՞վ բարեկամ, և նրա վերաբերմամբ տուել ես ինձ հարցեր, որոնց ես սակայն դեռ չեմ պատասխանել: Այժմ լսիր ինձ: Հանգուցեալը, որի դագաղն ինձմով զարդարեցին, անուն ստացաւ աշխարհում բախտի անարդար բերմունքով: Նրան անուանեցին «Անկաշառ հրապարակախօս, ճշմարտութեան դրօշակիր, ազատամիտ մարտնչող և ալլն և ալլն և այդպիսի խօսքեր էլ դրոշմեցին, ահա, իմ ժապաւէնի վրայ. որպէս զի ընթերցողներն հաւատան թէ իրանց մէջ, արդարև, ապրել է այսպիսի մարդ... Բայց աւանդ բարեկամների հիւսած այդ ներբողեանը ոչ ալլ ինչ էր, եթէ ոչ խաբկանք ու ստուծիւն: Այդ մարդը, իրաւ, հրապարակախօս էր, բայց կաշառակեր, ձեռքին ունէր մի դրօշ, որ ճշմարտութեան չէր պատկանում. մարտնչում էր, այո՛, բայց ոչ ազնուաբար: Պու երևի զարմանում ես թէ՛ ո՞վ կարող է հրապարա-

կախօսին կաշառել: Բայց խելամտիւր թէ՛ Բնշ բան է կաշառը: Դա մի անարգ վարձատրութիւն է, զոր մարգիկ ստանալով՝ ծածկում են ճշմարտութիւնը և խղճի ձայնը լռեցնում: Դրա հետեանքը լինում է այն, որ արդարը խաչում է, իսկ լանցաւորն ազատւում. առաքինին անարգւում է, իսկ մօլին փառաբանւում: Արդ նման վարձատրութիւնը կարող է լինել և բարոյական: Հրապարակախօսն, ի հարկէ կաշառւում էր բարոյապէս: Ամեն բանից աւելի իւր *սուղ* սիրելով (ինչպէս բոլոր այն մարդիկ, որոնց բնութիւնը ստեղծել է փքացող ու անհանճար), նա, բնականաբար էր և փառամոլ: Հետեւապէս, ով որ շօյում էր նրա *սուղ*, ով որ ասում էր թէ՛ «գո՛ւ եո Մեսիայն, թէ քո՛ քարոզն է ճշմարիտ, քո՛ ուղղութիւնն է փրկարար, քո՛ խելքն է կատարեալ»... լինէր այդ ասողը մի սինլքոր շողոքորթ՝ թէ՛ մի խորամանկ սրիկայայդ միւսնոյն է, հրապարակախօսը նրան հըռչակում էր ազնիւ մարդ, ճշմարտութեան զինուոր, ուղղամիտ դատաւոր և այլն և այլն: Դրա հակառակ՝ եթէ մինը համարձակէր նրա *սուղ* շօշափել՝ յայտնելով մի հասարակ ճշմարտութիւն, ասէր, օրինակ թէ՛ «Դու *մեծ* մարդ չես, այլ միայն *փքացող*, որ *մեծի* կապիկն է. թէ քո արժանիքը ոչ թէ էական, այլ երևոյթական է. ասէր թէ դու ազատամիտ չես, որովհետեւ բռնանում ես քո հակառակորդի խղճի ու կամքի վրայ և քեզ հետևողներին ուղեղը պատրաստ մտքերով նախապաշարելով՝ արգելում ես նրանց՝ ազատօրէն մտածել. ասէր թէ՛ դու արժանի չես ուրիշներին առաջնորդելու, որովհետեւ խօսքով սրբութիւն ես քարոզում, իսկ գործով՝ պղծութիւն: Նը քաջալերում», այն ժամանակ, ո՛, ականջներդ պիտի խցէիր որպէս զի հրապարակախօսի հայհոյանքը ուղեղդ չըմբրացնէր: Այս պատճառով էլ, ահա՛, ժողովրդի մէջ ապրող բոլոր խեղկատակները, շողոքորթները, զրպար-

տիչները հռչակում էին իբրև կատարելութիւններ, մինչդեռ արժանաւոր ու առաքինի մարդիկ մատնում անարգանքի, իսկ հանճարները՝ մնում անյայտութեան մէջ... Այս առթիւ եղած արտունջն ու բողոքը չէր լսում դրսում, որովհետև հրապարակախօսը հրատարակում էր միայն բարեկամների գրուածքներն, որոնք, մեծ մասամբ, փառաբանում էին իրան։ Այսպիսով էլ, ահա, նրա արժանիքը գնահատուեց մեծագնի. իսկ ճշմարտութիւնը, որ կարող էր մարդկանց մտքերը լուսաւորել, մնաց կալանաւոր... 'Ի ու ամեն օր լսում էիր թէ ինչպէս այդ հրապարակախօսը բողոքում ու լուտանք էր թափում այն մարդկանց հասցէին, որոնք նիւթական շահու համար հարստահարում էին իրենց տկար ընկերներին, որոնք պարտք խնդրող աղքատից. հարիւրին քսան տոկոս էին առնում, — «Հարստահարիչներ, կեղեքիչներ, աւազակներ»... գոռում էր նա զայրագին և արարած աշխարհին յայտնում թէ մեծ ոճիր է կատարուել, որ Մաթուսաղայի օրերից սկսած մինչև այսօր պարտքով ապրող Յաբեթոսը 100 արծաթին 20 տոկոս է վճարել։ Ի՞նչ հարուած, ի՞նչ թըշուառութիւն։ Ի՞նչու բանաստեղծները ողբերգութիւն չեն գրում Յաբեթոսի համար, իսկ երկրի վարիչները ի՞նչու չեն կախում 20 տոկոս ստացող Մաղքոս աղային...։ Այս աղմկաւոր բացազանչութիւնները, ով լուսարար, դու լսում էիր ամեն օր, բայց չէիր լսում թէ՛ ի՞նչ էր մրմնջում կալանաւոր ճշմարտութիւնը. — «Կեղծաւորներ, փարիսեցիներ, ասում էր նա. դուք որ այդպէս լաւ ճանաչում էք յանցաւորներին, ինչո՞ւ ապա մինչև այսօր հրապարակ չէք հանում միտք հարստահարողներին, խիղճ կեղեքողներին, սիրտ ու յոգի առւանգողներին։ Ինչո՞ւ չէք յայտնում աշխարհին թէ՛ այդ մարդիկը հէնց դուք, աղմկաւորներդ էք, որ յանդուգն

ու համարձակ ճեմում էք հրապարակում, խօսում բարձ-
 րագոյ, շաղակրատում անընդհատ, որ ներկայացնում
 էք ձեզ՝ իբր բարոյականութեան վարդապետներ, լու-
 սաւորութեան ջահեր, պրօմէթեան կրակի մատակա-
 րարներ .. Եւ ժողովուրդը լսում է ձեզ և հասարակու-
 թիւնը հրճւում՝ որ իւր միտքը, կարծիքը և ցանկու-
 թիւնները կառավարում են ձեզ նման անշահասէր և
 լաւէտ անձնուէր առաքեալներ... Ինչո՞ւ չէք յայտնում
 թէ դուք խաբում էք նրան. թէ այն ամենը, ինչ որ
 գրում ու խօսում էք, ստուծիւն է և կեղծիք. թէ
 բարւոյ ու առաքինութեան մասին ձեր լերիւրած ճա-
 ռերը լոկ ուռկաններ են, արուեստակեալ այնպէս նուրբ,
 ինչպէս սարգի՝ ոստայնը, որի մէջ խճճւում են գաղա-
 փարի սիրահար ճանճերը... Ինչո՞ւ չէք ասում թէ՝ այն
 դրօշակը, որի վրայ փայլուն տառերով գրուած են ազ-
 նուրթիւն, անկեղծութիւն, գերազոյն գաղափարներ և
 այլն, հաստատուած է, ո՞չ թէ ձեր սրտի ու հոգւոյ,
 այլ ստամոքսի վրայ և որ դուք հրապարակով ռքամում
 էք մօղակները՝ միայն նրա համար, որպէս զի գաղ-
 տուկ շուղտերը կլանէք և ազատ մնաք հասարակաց
 դատաստանից... Եւ սակայն, աւանդ, ճշմարտութեան
 այս ձայնը միայն ես եմ լսում. որովհետեւ նա կապուած
 է խաւարի ու անյայտութեան մէջ: Ես տեսնում եմ
 նրան ամեն օր և սրտագին վշտանում: Իսկ երբ դու, ո՞վ
 լուսարար, գալիս ու սրբում էիր մեր ծաղիկների փոշին,
 կամ իմ ժապաւէնի մակագրութիւնը կարգալով հիւ-
 նում, ես ամօթից կարմրում էի և Աստծուն աղաչում,
 որ լեզու տալ ինձ քեզ հետ խօսելու և ճշմարտու-
 թեան խելամուտ անելու... Օ՛, եթէ գիտենայիր թէ՝
 ինչպէս ծանր է տեսնել անմեղ մարդկանց խաբուիլը...
 Այժմ, ահա, լսեցիր ինձ, լսեցիր, նաև, իմ ընկերներին,
 ճն, ուրեմն, հանիր մեզ այս տաճարից և ցրուիր փո-

զոցում. թող մարդիկ մեզ կոխոտեն, թող եկեղեցին, որ վեհավայր է սրբութեան և ճշմարտութեան, չբարդ-ծուի մեզմով, որ մարմնացումն ենք ստութեան...:

«Այս ամենը, պարոն բժիշկ, ես լսում էի և տեսնում. ես հաւատում էի որ սա մի երևոյթ, մի գերբնական տեսիլ էր և թէպէտ սկզբում հետաքրքրւում էի դրանով, բայց յետոյ իմ հետաքրքրութիւնը փոխուեցաւ երկիւղի. ես զգում էի որ կուրծքս հետզհետէ ճնշւում, շունչս սպառւում է, որ մարմինս արդէն պատել է սառը քրտինք... ես փորձ փորձեցի ճեղքել պսակների ցանկապատը և փախչել եկեղեցուց: Սյդ յաջողեց ինձ մասամբ. ես մօտեցայ դրանը. Բայց հէնց այդտեղ ցանկապատը նորէն ստուարացաւ և պսակներից մինը տխուր ձայնով բողոքեց.

— Ինչո՞ւ, ո՞վ լուսարար, չես լսում, նաև ինձ: Չէ որ դո՞ւ էիր, որ հարցնում էիր թէ՛ գիտե՞մ լարդեօք քնչ կընշանակէ՛ լինել Վազնիւ ու անկեղծ բարեկամ, որ աշխարհից հեռանալով՝ «վշտահար» է թողնում սրտերը: Այդ խօսքերը դու կարդացիր իմ ժապաւէնի վրայ. այժմ թո՞ղ որ յայտնեմ թէ՛ ո՞վ էր այդ անկեղծ հանգուցեալը:— Դու մի զարգացած և հարուստ մարդ էր, որին սիրում էին շատերը, որովհետև նա գիտէր հաճելի լինելու արհեստը: Բայց այդ շատերից մինը, Ա. Ե. նրան ոչ թէ սիրում, այլ պաշտում էր, որովհետև հանգուցեալը, առանց որ եւ է ակընկալութեան՝ օգնութեան հասաւ իրան վտանգի ժամանակ: Ա. Ե. զգացուեց խորապէս, որովհետև հաւատաց թէ հանգուցեալն այդ արաւ բարձր մարդասիրութեան զգացմունքից գրգռւած, ուստի և դէպի նրան սկսաւ տածել անսահման սէր: Սակայն ճշմարտութիւնն այս էր. Ա. Ե. ունէր մի կին, որ գեղեցիկ էր և առաքինի. Հանգուցեալը վաղուց գրաւուած էր նրանով. բայց մօ-

տենալ չէր համարձակում: Երբ Ա. Ե. ընկաւ վտանգի մէջ, հանգուցեալն ուրախացաւ և շտապեց օգնել նրան, որպէս զի դրանով Ա. Ե. ի տանը մօտենալ: Թակարթը յաջողեց: Հանգուցեալը մտերմացաւ Ա. Ե. ի ընտանեաց հետ: Եւ որովհետեւ աշխարհում առաքինի են մնում միայն այն կանալք, որոնց չէ պատահում զայլթակողեց-նողը, ուստի գեղեցկուհին հեշտութեամբ հրապուրուեց ... Ա. Ե. այդ չիմացաւ: Եւ երբ բարերարը մեռաւ, նա գնեց ինձ թանգ գնով և «վշտահար» սրտով դրաւ նրա դագաղի վրայ, իւր կնոջ սիրահարին անուանելով լազնիւ և անկնդ ըստնկամ»:

«Արդէն ձեռքս դրել էի դրան վրայ և կամենում էի բանալ, երբ մի շքեղ պսակ կախուելով փեղկերից բացականչեց.

— Իսկ ինձ, բարեկամ, մէթէ չես լսում, չէ որ բոլոր պսակներից քնքոյշն եմ ու գեղանին. չէ որ իմ ծաղիկները շինուած են բիւրեղից և ժապաւէնս՝ սպիտակ թաւշից: Դու գգուել ես ինձ ամենից աւելի և երանել ես նորան, ով արժանացել է ինձ իւր վրայ տեսնելու: Դէհ, այժմ լսիր թէ ինչ պիտի ասեմ:

«Ես կանգ առի:

— Ինձ վրայ դրօշմուած է գողտրիկ մակագիր, շարունակեց պսակը. — Անգուգական ամուսնուն անմխիթար կողակցից, այս է բոլորը. չորս սիրուն բառեր, որոնք վարագուրում են չորս տասնեակ կեղծիք: Հանգուցեալն, արդար, բարի ամուսին էր, իսկ և իսկ անգուգական. սիրում էր կնոջը քնքշութեամբ և իւր երջանկութիւնը գտնում միայն նրա մէջ. Կինը նոյնպէս կաթոգին էր դէպի նա: Բայց լետու փոխուեցաւ: Մի երիտասարդ գրաւեց նրան աւելի... Ամուսինն այդ իմացաւ, տխրեց, հիւանդացաւ և մեռաւ: Ցաւեցին մարդիկ, ցաւեց և կինը: Նա ամուսնու սիրոյն նուէր-

ներ բաժանեց—և իմ թանկագին ժապաւէնի բերանով հռչակուեց «Անմխիթար»։ Թաղումը վերջացաւ։ Բայց հէնց այն վայրկենին որ կախում էին ինձ այս եկեղեցու վերնատանը, այրին իւր առանձնարանում գրկած էր սիրահարին և «մխիթարուում էր» նրա համբուրներով...։

«Ես ոչինչ այլևս չըկարողացայ լսել. բացի շտապով եկեղեցու դուռը և դուրս փախալ այդտեղից»։

Լուսարարը լռեց և աչքերը բժշկին յառած սպասում էր թէ Բնչ պիտի ասէ նա։

Բայց վերջինս, որ շատ էր հետաքրքրուել այս տարօրինակ պատմութեամբ, դեռ սպասում էր շարունակութեան, ուստի հաւրցրեց.

—Յետոյ Բնչ պատահեց։

—Յետոյ ես լսեցի թէ Բնչպէս պսակները ողբում էին ու բողոքում, որ պիտի մնան եկեղեցում։

—Վերջը։

—Վերջը այն եղաւ որ ես շտապեցի տուն։ Տեսիլը, իրաւ է, չբացել էր աչքիցս, բայց ես ամբողջ օր նրա վրայ մտածեցի, թէպէտ ոչ ոքի ոչինչ չըյայտնեցի։ Հետևեալ առաւօտ երբ ներս մտալ եկեղեցի, պսակները չերևացին։ Բայց հէնց որ մօտեցայ լոյս առնել կանթեղից՝ որպէս զի մոմերը վառեմ, դարձեալ լոցի բողոքող ձայներ, որոնք հարցնում էին.

—«Ծառայ Աստուծոյ. ինչո՞ւ չես հաճում մեզ այստեղից և փողոցում ջախջախում, ինչո՞ւ ես թողնում որ Աստուծոյ տունը պղծուի...»։

«Ես, ի հարկէ, գործս թողեցի կիսատ և դուրս փախայ։ Իմ պաշտօնը կատարեց ժամահարը։

«Իսկ այսօր առաւօտ, երբ նոյն ձայները կրկնուեցան, ես փակեցի եկեղեցին և գնացի ուղղակի առաջնորդի մօտ։ Այնուհետև պատմութիւնը արդէն յայտնի է ձեզ»։

Բժիշկը մի փոքր մտածելուց յետ՝ յայտնեց որ լու-

սարարը երկար ժամանակ այդ մտքերով ապրելով, կամ նրանցով յափշտակուելով՝ ենթարկուել է վերջապէս զգայարանաց պատրանքի, այն է հալլիւսինասիօնի ուստի և խորհուրդ տուաւ նրան՝ փոխել կեանքի եղանակը և զբաղուել մի փոքր աշխարհային զուարճութեամբ։

Գալով առաջնորդի նամակին՝ նա պատասխանեց նրան հետեւեալը.

«Սրբազան հայր.

Ձեր լուսարարը խելագար չէ։ Նրա հետ խօսել են այն ոգիները, որոնք խօսում էին մի օր Սոկրատի, Մահմեդի, Լոյուլայի, Լիւթերի, Գէօթէի և այլոց հետ։ Ձանազանութիւնն այն է, որ յիշեալները հռչակաւոր մարդիկ դարձան, իսկ սա, ամենաշատը, պիտի դառնայ հայ քահանայ։ Այսուամենայնիւ, վատ չի լինիլ եթէ լսէք նրան և մեռեալների պսակները հանել տաք եկեղեցուց։ Իրաւ որ հաճելի չէ տեսնել եկեղեցում ստուլթիւն ու կեղծիք վարագուրող իրեր։»

Սրբազանը կարդաց այս նամակը և սարսափեց.

— Յակօ, կանչեց նա։

— Հրամմէ, սրբազան, բոլորս իսկոյն սենեկապանը։

— Այ տղայ, լուսարարի գթութիւնը վարակիչ է եղել։

— Ո՞նց թէ վարակիչ, սրբազան։

— Այ բժիշկն էլ է գթուել։

— Եօ։

— Հապա։ Գրում է թէ ձեր լուսարարը Սոկրատի, Մահմեդի, Լուտերի ու Գէօթէի նման խելօք մարդ է։

— Տէր, Աստուած։

— Բնս. առաջին անգամն է որ այսպիսի բան եմ իմանում։ Դէհ, շուտ վազիր երեցփոխի մօտ և ասա իմ կողմից որ լուսարարին ներս չըթողնէ եկեղեցի, քահանաները կարող են գթուել. գուցէ, ժողովուրդն էլ վա-

րակուի: Յետոյ իմացրու բժշկին՝ որ չըմտնէ առաջնորդարան. ես վախենում եմ նրանից:

Սրբազանի իմաստուն կարգադրութեան շնորհիւ լուսարարը արտաքսուեց պաշտօնից, իսկ բժիշկ Մալուխեանը այլ ևս չկոխեց առաջնորդարանի դուռը:

ՄՈՒՐԱՅԱՆ

